

Նրա որդին էջմիածնումն է ծառայում, իսկ հայրը, թէկուզ էլ անգրագետ, վախագեւ է քահանայ դառնալ և ապա մեռնել... Աշխարհի սկզբից մինչև այսօր սա տարօրինակ երեւոյթ չէ համարում. ո՞վ է տեսել, որ որդու մահից վտուղ նրա գահը ժառանգէ հայրը:

Այս դառամեալ նորընծան հինդերորդ քահանան է աչն գիւղի մէջ, որի վրա նա ձեռնադրեց, իսկ վեցերորդը ձեռնադրեց նրանից հինգ օր չեսույ: Չէ.ք հաւատում, կամենաք քահանաների անուճները մէկ-մէկ վիշնք, — տէր-Խաչատուր, տէր-Պետրոս, տէր Յովհաննէս, տէր-Պողոս, տէր-Մոսէս և տէր-Վրիգոր. իսկ գիւղը՝ կուսապատ:

Մենք նմուշի համար առաջ բերեցինք ալտեղ շատերից մի երկու փաստ, որպէս զի մեր ասածը սուտ չհամարեն նրանք, որոնց չատկութիւնն է միշտ ստել և կեղծել, գուալ և գոչել՝ թէ հալոյթեցին մեզ, սրբապղծեցին ժողովրդի ազնիւ զգացմունքները, լարձակեցին հոգևորականութեան դէմ... Ապա ինչ, ծածկել վէրքը, որ փտի մարմնի մորթու տակ և ապականէ ամբողջ կազմը:

Եթէ Ղարաբաղի թեմին ալտօրւանից սկսած ամենաքիչը քսան տարի քահանայ չտան, եղածը նրան հերիք է և ոչ մի տրտուճ չի չարացանի որ և է հասարակութիւն, միայն թէ չգրգռեն նրան տգէտ տիրացուների բարեկամները և հոգևոր իշխանութեան դուռը չը զրկեն:

Չո՛ր է միանգամայն շտապել հաւատ ընծայելու հասարակութեան աչն ներկաչացուցիչներին, որոնք առաջին անգամ առաջնորդարանի դռներն են մաշում, պէտք է մտնել, անձամբ մտնել ժողովրդի մէջ և չափել նրա ցաւը. աչն ժամանակ կը տեսնէք, որ հնար կալ տգիտութեան դէմ մաքառելու: Հարեան գիւղն ունի երկու քահանայ, իսկ քահանայ խնդրող գիւղը հինգ վերստի վրա է կանգնած ալք գիւղից: Քահանայ ունեցող գիւղը քառասուն ծուխ է, իսկ մօտիկ գտնւած 10—15 տուն ունեցող գիւղը քահանայ է խնդրում: Եւ սրանք համարում են զժաւորութիւններ:

Անարդարութիւն է կաշառքով տգէտ քահանաները բազմացնել ու մեղքը ժողովրդի վրա դցել:

Շուշի:

S.

## ՔԱՅԱՆԱՅԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ

ՍՈՒԼԴՈՒԶ ԵՒ ՍՈՎՈՒԶՅՈՒԼԱՂ ԳԱՒԱՌՆԵՐՈՒՄ <sup>1)</sup>

Հրաւիրում եմ ուշադրութիւն Պարսկա-քրդաստանի խուլ ան-

<sup>1)</sup> «Շաւիղ», 1994 թ., № 16, Յօդածից, որ խորագրած է «Սուլդուղ և Սովուզբուլաղ գաւառները», գէն ենք գցել սկզբի մի քանի տողերը: Խմբ.

հիւններում ընկած մի քանի հալածական գիւղերի վրայ, որոնք տարիներէ ընթացքում զուրկ են մնացել ուսումնարանից, քահանայից ու ունէ ազգային մի հաստատութիւնից: Մի ազգաբնակութիւն, որ հասնում է մինչև 1900 հոգու Սուլղուզ և Սովուչբուլաղ գաւառներում, չէ ունեցել մինչև այսօր ոչ մի ազգային դպրոց, կանոնաւոր քահանայ և եկեղեցի: Եթէ ունեցել է քահանայ, թիւը երկուսիդ վեր չի բարձրացել, ինչպէս որ այժմ է: Բայց երկու հոգի քահանայ ինչպէս կարող են 17 ցիրուցան գիւղերի, Սովուչբուլաղ քաղաքի և Միւսնդուար աւանի վրայ միանգամից վերահաստ-  
թիւն անել:

17 գիւղից երեքը միայն ունին եկեղեցի, զրանց դռներն էլ զփաղ-  
դաբար տարին 12 ամիս կապ են ու կապ:

Խղճալի է ամեն կողմից նոցա զրութիւնը, նոքա չգիտեն իրենց մաւրենի լեզուն, խօսում են թրքերէն ու քրդերէն: Նրանց մեռելը թաղ-  
ւում է առանց քահանայի Չատիկ տօն օրերը անցնում են նոյնպէս առանց քահանայի, ուրեմն և իրենց կեանքում անհաղորդ են մնում Տիրոջ Ընթրի-  
քին: Նիւթական սաստիկ անձուկ միջոցները մի կատարեալ խալտառակ քառս են դարձրել նրանց ներքին ընտանեկան-տնտեսական վիճակը: Նիւթական այդ անտանելի զրութիւնը չաճախ ստիպում է նրանց թողնել մաւրենի կրօնը և ընդունել սիւննի կրօնքը: Այդ ցաւալի երեւութը մի սո-  
վորական բան է դարձել:

Իսկ տգիտութիւնն ու խաւարամտութիւնը պատել են նրանց մտքի  
ամբողջ հորիզոնը:

Այս ցաւալի իրողութիւններէն չետու, մասնաւորապէս հրաւիրում եմ  
այդ կողմերի վրայ «Աէր» ընկերութեան և թեմիս առաջնորդ նորին սըր-  
բազնութիւն Սուքիաս Արքեպիսկոպոսի ուշադրութիւնը:

Թող չմոռանան նոքա, որ այդպիսի տեղեր շատ լուրջ ուշադրու-  
թեան արժանի են:

Այսօր դրանց վիճակը մի տազնապի մէջ է. եթէ այս մի քանի տար-  
ւաչ ընթացքումն էլ չուենան աւելի քահանաներ, նամանաւանդ դպրոց-  
ներ և չբարեօքել նրանց նիւթական խիստ ընկած վիճակը, անկասկած,  
թող հաւատան ընթերցողները, որ նոքա կը ձուլին քուրդ ու թուրք  
տարրի մէջ:

Նախ քան նամակս վերջացնելը, կրկին և կրկին դիմում եմ վիշեալ-  
ներին բարձի թողի չանել այդ սուրբ պարտականութիւնը: